Արձանագրություն N 3

«ՍՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-06/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

 հ.Գորայք

«06»օգոստոս 2019թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝	Ա.Թորոսյան-Գորայք համայնքի ղեկավարի տեղակալ
հանձնաժողովի անդամներ՝	Ս.Մուսաթյան- առաջատար մասնագետ- հաշվապահ Ա.Մարգարյան- Երկրաբան-ինժեներ
հանձնաժողովի քարտուղար՝	Սահականուշ Գրիգորյան-գնումների համակարգող

1.ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերի ներկայացման մասին

1.1. Ընդունել ի գիտություն.
Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04. 05. 2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման»կարգի 43-րդ կետի պահանջները ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել ընտրված մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Առաքել»ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ 4000 դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ ունի, որը չի գերազանցում թույլատրելի շեմը (մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի մինչև 1 %-ը, բայց ոչ ավելի քան 50000ՀՀ դրամ):«Առաքել»ՊԸ-ն ներկայացրել է նաև պարտավորությունների շտկման վերաբերյալ փաստաթուղթ:

1.2. Ընտրված մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Փաստաթղթերում առկա էին որոշակի անճշտություններ՝ մրցույթի ծածկագիրը սխալ էր գրված, մասնակիցը ծանուցվել է սխալի մասին և առաջարկվել է նշված թերությունները շտկել մեկօրյա ժամկետում: «Առաքել»ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ :

2.Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

2.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ՍՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-06/19» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները և «Առաքել»ՍՊԸ-ի հայտը գնահատել «բավարար»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ :

3.«ՍՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-06/19» ծածկագրով գնումների կատարման նպատակով հայտարարված ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

3.1. Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ՍՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-06/19» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից է հայտարարվում «Առաքել»ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ :

4. Գնման պայմանագիր կնքելու որոշման մասին

4.1. Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը «Առաքել»ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

4.2. Հիմք ընդունելով «Գնումների մասին»ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը, անգործության ժամկետ սահմանել 5 օրացույցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ :

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

5.1 «ՍՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-06/19» ծածկագրով մրցույթի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտի դառնալու օրվան հաջորդող օրացույցային օրը ժամը 11:00-ին ՀՀ Սյունիքի մարզ, Գորայք համայնք, բնակավայր Գորայք, Բ.Վարդանյան 11 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ :

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա.Թորոսյան

Անդամ՝ ---------- Ս.Մուսաթյան

---------- Ա.Մարգարյան

Քարտուղար՝ ---------- Սահականուշ Գրիգորյան